



## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂՐՈՒՅՆԵՐ

- 1.1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհուրդը ռեկտորի նախագահությամբ գործող կոլեգիալ մարմին է, որն իրականացնում է Համալսարանի ընդհանուր ղեկավարումը՝ Գավառի պետական համալսարանի խորհրդի որոշումներին համապատասխան:
- 1.2. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:
- 1.3. Գիտական խորհուրդն իրականացնում է Համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության ղեկավարման ընդհանուր լիազորություններ:
- 1.4. Գիտական խորհրդի որոշումները պարտադիր են Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների, դասախոսների և ուսանողների համար:

#### 2. ԳՊՀ գիտական խորհրդի իրավասությունները

- 2.1. Համալսարանի գիտական խորհուրդը գործում է իր կանոնակարգին համապատասխան:
- 2.2. Գիտական խորհուրդը ռեկտորի առաջարկությամբ որոշում է կայացնում ֆակուլտետներ, ամբիոններ, գիտահետազոտական կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, կառուցվածքային այլ ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմավորելու, լուծարելու մասին:
- 2.3. Հաստատում է դեկանների, ամբիոնի վարիչների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների համալրման մրցութային կարգը, կազմակերպում մրցույթները:
- 2.4. Քննարկում է Համալսարանի մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը:
- 2.5. Հաստատում է ուսումնական պլանները՝ ըստ մասնագիտությունների:
- 2.6. Քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ՝ Համալսարանում կատարվող գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների արդյունքների մասին:
- 2.7. Քննարկում և հաստատում է կադրերի որակավորման բարձրացման և վերապատրաստման միջոցառումների ծրագրերը:
- 2.8. Մշակում և հաստատում է Համալսարանի ֆակուլտետների օրինակելի կանոնադրությունը:
- 2.9. Ռեկտորի ներկայացմամբ հաստատում է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, կանոնակարգերը, ներհամալսարանական կարգապահական կանոնները, ներհամալսարանական այլ ակտեր:
- 2.10. Ընդունում է «Գավառի պետական համալսարանի պատվավոր դոկտոր», «Գավառի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսոր», «Գավառի պետական համալսարանի պատվավոր բարերար», «Գավառի պետական համալսարանի վաստակավոր գիտաշխատող» կոչումները շնորհելու, համալսարանի մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, համալսարանի մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների ու կոչումների համար թեկնածուներ ներկայացնելու վերաբերյալ որոշումներ:
- 2.11. Համալսարանի կանոնադրության համաձայն՝ իրականացնում է գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:
- 2.12. Գիտական խորհուրդը կարող է փոփոխությունների ենթարկել սույն կանոնակարգը:

### **3.ԳՊՅ գիտական խորհրդի կազմը**

3.1. Համաձայն Համալսարանի կանոնադրության 19-րդ կետի՝ Համալսարանի գիտական խորհուրդը կազմված է ռեկտորի կողմից ի պաշտոնե նշանակվող և Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընտրված անդամներից:

3.2. Գիտական խորհրդի անդամների թվաքանակը չի կարող գերազանցել 45-ը: Համալսարանի գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են՝ ռեկտորը (նախագահ), պրոռեկտորները, գիտական քարտուղարը, դեկանները, ամբիոնների վարիչները, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները, ինչպես նաև ռեկտորի նշանակմամբ՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետության գիտության և կրթության առաջատար մասնագետներ:

3.3. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թվի 20%-ը նշանակվում է ռեկտորի կողմից, որոնք կարող են լինել Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, համալսարանի դասախոսներ և գիտաշխատողներ, ինչպես նաև հանրապետության գիտության, կրթության, մշակույթի ոլորտի առաջատար մասնագետներ, հասարակական և քաղաքական գործիչներ:

3.4. Գիտական խորհրդի նիստի անցկացումը հնարավոր է միայն նրա անդամների 2/3-ի առկայության դեպքում, իսկ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.5. Համալսարանի գիտական խորհրդի մնացած անդամներն ընտրվում են Համալսարանի հիմնական ուսումնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից:

3.6. Ընտրությունների համամասնությունը և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի քվոտաները որոշում է ռեկտորը:

3.7. Համալսարանի գիտական խորհրդի անդամների կազմը ռեկտորի ընտրությունից հետո մեկամսյա ժամկետում կազմվում և հաստատվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ 5 տարի ժամկետով:

### **4.ԳՊՅ գիտական խորհրդի աշխատակարգը**

4.1 Համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամ:

4.2 Գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ ռեկտորի որոշմամբ:

4.3 Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են Համալսարանի ռեկտորը և գիտական քարտուղարը:

4.4 Գիտական խորհրդի անդամներին նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին տեղեկացվում է ամենաուշը 3 օր առաջ, գրավոր ձևով:

4.5 Օրակարգի հաստատումից հետո այն ծանուցվում է գիտական խորհրդի անդամներին:

4.6 Համալսարանի ռեկտորը՝ որպես գիտական խորհրդի նախագահ, բացելով խորհրդի նիստը, քվեարկության է դնում օրակարգը:

4.7 Գիտական խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

4.8 Համալսարանի գիտական քարտուղարը կազմում է գիտական խորհրդի նիստերի արձանագրությունը:

4.9 Օրակարգի հարցերը ներկայացվում և լուսաբանվում են համապատասխան զեկուցողների կողմից:

4.10 Գիտական խորհրդի որոշումները իրավական ուժ են ստանում, եթե կողմ են քվեարկել գիտական խորհրդի անդամների առնվազն 50%-ը:

4.11 Գիտական խորհրդի որոշումները կենսագործվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

4.12 Համալսարանի ռեկտորն իրավունք ունի կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում խորհրդի իրավասությունից, հակասում են ՀՀ գործող օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներհամալսարանական այլ ակտերին:

4.13 Գիտական խորհրդի կասեցված որոշումները Համալսարանի ռեկտորը գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում դնում է վերաքննարկման և վերաքվեարկության:

4.14 Եթե վերաքվեարկության միջոցով գիտական խորհուրդը ձայների 2/3-ով վերահաստատում է իր որոշումը, ռեկտորը պարտավոր է հաստատել այն:

### **5.ԳՊՀ գիտական խորհրդի նախագահի իրավասությունները**

Գիտական խորհրդի նախագահը.

5.1 վարում է գիտական խորհրդի նիստերը՝ կանոնակարգին համապատասխան,

5.2 ըստ հերթականության ներկայացնում է զեկուցողներին և ելույթ ունեցողներին,

5.3 գիտական խորհրդին ներկայացնում է Համալսարանի՝ հաջորդ տարվա աշխատանքային պլանը,

5.4 գիտական խորհրդին ամենամյա զեկույց է ներկայացնում Համալսարանի ընդհանուր վիճակի մասին,

5.5 գիտական խորհրդի նիստերում տալիս է տեղեկություններ Համալսարանի խորհրդի աշխատանքների մասին,

5.6 անհրաժեշտության դեպքում հրավիրում է գիտական խորհրդի արտահերթ նիստ. կասեցնում է գիտական խորհրդի որոշումների իրականացումը, որոնք դուրս են գիտական խորհրդի լիազորությունների շրջանակից,

5.7 իր անհամաձայնության դեպքում գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումը կասեցնում է և նշանակում վերաքննարկում և վերաքվեարկություն,

5.8 գիտական խորհրդի հաստատման է ներկայացնում մշտական և ժամանակավոր հանձնաժողովների կազմերը,

5.9 քվեարկության է դնում քննարկվող հարցերը,

5.10 ամփոփում է նիստի արդյունքները,

5.11 հաստատում է գիտական խորհրդի կանոնակարգը:

### **6. Հարցերի քննարկման և որոշումների կայացման կարգը Համալսարանի գիտական խորհրդում**

6.1 Գիտական խորհրդի նիստի սկզբում գիտական քարտուղարը գրանցում է նիստին մասնակցող գիտական խորհրդի անդամների ներկայությունը: Անհրաժեշտ քվորում չապահովվելու դեպքում ռեկտորի որոշմամբ կարող է երկարաձգվել գրանցումը՝ մինչև քվորումի ապահովումը, կամ հետաձգվել նիստը: Հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է ընդհանուր կարգով:

6.2 Օրակարգի հարցերի քննարկումը սկսվում է հիմնական զեկույցով: Հիմնական զեկուցողին կարող են տրվել հարցեր, զեկուցումից հետո տեղի է ունենում նույն հարցի քննարկում գիտական խորհրդի անդամների մասնակցությամբ:

6.3 Հիմնական զեկուցողին տրվում է 15 րոպե՝ ելույթի համար, քննարկմանը մասնակցողներին՝ 10 րոպե:

6.4 Արտահերթ կամ լրացուցիչ ելույթի համար տրվում է 5 րոպե ժամանակ:

6.5 Ձեկուցողը չի կարող շեղվել բուն նյութից, ինչի մասին, անհրաժեշտության դեպքում, նրան նախազգուշացնում է գիտական խորհրդի նախագահը:

6.6 Ստբերի փոխանակությունից հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը կարող է հանդես գալ եզրափակիչ խոսքով:

6.7 Հիմնական զեկուցողի առաջարկությունները դրվում են քվեարկության:

6.8 Հիմնական զեկուցողի առաջարկության մերժման դեպքում քվեարկվում են այլ առաջարկություններ՝ ըստ հերթականության:

### **7. Քվեարկության կարգը**

7.1. Համալսարանի գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները պետք է ընդունվեն փակ, գաղտնի քվեարկությամբ:

7.2. Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների համալրման և գիտական կոչումների ներկայացման, ամբիոնների վարիչների ընտրության և այլ մրցույթների քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի:

7.3. Փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու համար գիտական խորհրդի կազմից ընտրվում է ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Հաշվիչ հանձնաժողովը որոշումներն ընդունում է հաշվիչ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.4. Առաջադրված թեկնածուների ազգանունները քվեաթերթիկներում տեղադրվում են այբբենական կարգով:

## **8. ԳՊՀ գիտական խորհրդի հաշվիչ հանձնաժողովի աշխատակարգը**

Հաշվիչ հանձնաժողովը

8.1 կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

8.2 պատրաստում է քվեաթերթիկներ փակ, գաղտնի քվեարկության համար, ապահովում է քվեարկության գաղտնիությունը,

8.3 նախքան փակ, գաղտնի քվեարկությունը՝ գիտական քարտուղարը հաշվիչ հանձնաժողովին է ներկայացնում գիտական խորհրդի անդամների ցուցակը,

8.4 փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկը ստորագրությամբ տրվում է գիտական խորհրդի անդամին,

8.5 գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ ստանում է մեկ քվեաթերթիկ,

8.6 քվեաթերթիկում պետք է նշվեն Համալսարանի գիտական խորհրդի նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարին, կարգային համարը, քվեարկության դրվող հարցի ձևակերպումը, քվեարկության տարբերակները («կողմ», «դեմ»),

8.7 մրցութային ընտրության դեպքում գիտական խորհրդի անդամը քվեաթերթիկից ջնջում է այն անդամի ազգանունը, որին նա դեմ է քվեարկում, և թողնում է այն անդամի ազգանունը, որի թեկնածությանը կողմ է. եթե ջնջված չէ այս տարբերակներից որևէ մեկը, կամ ջնջված են երկուսն էլ, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր,

8.8 հաշվիչ հանձնաժողովը քվեարկության արդյունքների հիման վրա կազմում է արձանագրություն, որը ստորագվում է հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից,

8.9 հաշվիչ հանձնաժողովի նախագահը գիտական խորհրդի նիստում զեկուցում է քվեարկության արդյունքների մասին,

8.10 եթե քվեարկության արդյունքներով թեկնածուներից ոչ մեկը չի հավաքում բավարար քանակությամբ ձայներ, ապա անցկացվում են նոր ընտրություններ: